

4613

281.64

m-976

1893

2010

98
w-976

УБЗУФУРЗУВРХУ

2012

126

27

281

64

Խ-916

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ

Գ Բ Ե Ց

Յ. ՃԱՂԱՐՔԵԳԵԱՆ

(Արտատպած Վեր-Պար-ից)



ТИФЛИСЬ.

Типография А. О. Мелик-Шахназарянца. Воронц. Наб.

Տպարան Ա. Յ. Մելիք-Շահնազարյանցի:

1893

2001

Дозволено цензурою Тифлисъ, 17-го сентября 1893 г.

46299. -mh

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Աւետարան Հայոց

Վեհափառ Կաթողիկոսը ծնունդ է մի թշուառ,
Հացից և լոյսից զուրկ, աղքատ, անխնամ և խա-
ւար ժողովրդի մէջ: Իւր ձեռքով շօշափել է այդ
ժողովրդի թշուառութիւնը, տեսել է նրա վերքե-
րը, կրել է իւր ուսերի վրայ նրա բռնի ծանրու-
թիւնը, ցաւել է նրա ցաւով, տանջուել է նրա
հոգսերով և, եթէ գէպք է եղել, ուրախացել է
նրա ուրախութեամբը: Նա վառուել, բորբոքուել
է այդ ժողովրդի սիրով, իւր հոգու բոլոր կարո-
ղութեամբ նուիրուել է նրա ցաւերը մեղմելու,
նրա բռնը թեթեացնելու, նրա գլխում լոյս և
սրտում յոյս հաստատելու գործին: Ինչ որ արել

է, այդ սէրի թելադրութեամբն է՞արել, ուր գնացել է, նրա հրամանովն է գնացել, ինչ կատարել է, նրա հրամանովն է կատարել: «Ժողովրդի սէրը իմ հրամանատարն է եղել»-ասում է Նա: Եւ իւր ամբողջ կեանքում հլու հնազանդութեամբ այդ չնաշխարհիկ հրամանատարի պատուէրներն է կատարել, պատուէրներ, որոնց կէտ նպատակին ժողովրդի, հօտի բարին, երջանկութիւնն է եղել: Ժողովուրդը տեսել է նրա սէրը, նրա հայրական խնամքը, նրա գորովալից սիրտը, և «ՀԱՅՐԻՆ» է անուանել, մի բառ, որով ժողովուրդը յայտնում է իւր զգացմունքների քնքուշութիւնը, իւր անհուն և անսահման սէրը, մի բառ, որ իւր մէջ ամփոփում է հոգեւորականի իդէալը:

* * *

Սկզբում Նա վանական կրթութիւն է ստանում: Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Նաբեկ դառնում են նրա կրթութեան աղբիւրները: Բայց Նա՝ այն ժամանակ պատանի Մկրտիչը, չի կշտանում: Նրա ուսումնասէր հոգու ծարաւը չի զովանում. Նա ձգտում է աւելի հեռուն, աւելի բարձրը: Եւ գնում է Պօլիս՝ Տաճկահայոց այն ժամանակուայ Աթէնքը: Այդ այն ժամանակներն էին, երբ Սուլթանների արքունիքից վերանորոգիչ ոգի էր փչում, և ազատամիտ հրովարտակներ էին դուրս գալիս, որոնք պետութեան բոլոր հպատակներին անխտիր

իրաւունքների հաւասարութիւն, կայքի և կեանքի ապահովութիւն տալով, հրաւիրում էին դէպի քաղաքակրթութիւն, դէպի ուսում և լուսաւորութիւն: Պօլսի առաջադէմ հայերի շրջանում խմորւում էր ազգային սահմանադրութեան գաղափարը: Հայրիկը տեսնում է այդ բոլորը, ուրախանում, հրճւում է, բայց և նայում է հեռուն՝ դէպ ապագան: Մխիթարական ոչինչ չկայ այնտեղ, եթէ բուն Հայաստանի ժողովուրդը տգէտ և խաւար կմնայ: Լուսաւորութիւն, այդտեղ է թագնո՞ւած ժողովուրդների և ազգերի երջանկութիւնը: Տգիտութիւնը, խաւարը ժողովրդի կեանքը թունաւորելու միայն ոյժ ունի: Պէտք է ոչնչացնել նրա հաստատուած, տարածուած արժատները: Այս միտքը զրաւում, գերում է Հայրիկի ուշքն ու միտքը: Եւ նա իւր քայլերը դէպի հայրենիք է ուղղում, դէպի Վասպուրական Աշխարհը: Յուպը ձեռին, գեղեցիկ խորհուրդներով և ծրագիրներով՝ գնում է կռուելու խաւարի դէմ և լուսաւորութեան հիմքը դնելու բուն հայրենիքի մէջ: Մեծ է խաւարի ոյժը. դրժուար է նրա դէմ կռուելը, բայց և մեծ է Հայրիկի հաւատը. աւելին ասենք՝ Նա մարմնացած հաւատ է և յոյս: «Առանց Մովսիսի առաջնորդութեան կամ այն հրաշաւոր դաւազանի ներգործութեան, ասում է Նա, կարող ենք Կարմիր ծովուն տգիտութեան խաւարին անդունդները պատառել և միւս կողմն անցնել:

* *

Եւ հայրենիքի սիրոյ և գիտութեան լուսաւոր սիւնն իրեն առաջնորդ ունենալով՝ նա հասնում է Հայաստանի Գալիլիան՝ սքանչելին Վարազը: Դա մէկն է Հայաստանի սրբազան տեղերից: Դարերով այդ տեղ պահւում էր ս. Նշանը և կենդանի պահում, ոգևորում Քրիստոսական փրկարար խաչին ապաւինած մի բուռն ժողովրդի կրօնական զգացմունքները: Այդտեղ էր պահւում Քրիստոսին հարսնացած կոյսը՝ հրաշալին Հռիփսիմէ, որ յետոյ Մասեաց ստորոտներում խորտակեց հեթանոս թագաւորի ամբարտաւանութիւնը և առիթ եղաւ Հայաստանի լուսաւորութեան Հօր՝ Ս. Գրիգորի վերապից դուրս բերուելուն:

Այդտեղ է հաստատուում Հայրիկը: Տիրապետող ամայութիւնից նա չէ յուսահատուում: Յուսահատութիւնն էլ իւր տեղն ունի. նա մօտ չի գալիս այն մարգկանց, որոնք նպատակի են ծառայում, իդէալներ ունին և տոկունութեամբ նրանց են ձգտում: Հայրիկի առաջ գլուխ են բարձրացնում նախանձը, չարակամութիւնը, շահասիրութեան, ընչաքաղցութեան հոգին և աշխատում են տապալել նրա ծրագիրն ու ձեռնարկութիւնները: Հայրիկը՝ թէև մէն միայնակ՝ յաղթող է հանդիսանում: Ժառանգաւորաց դպրոց է հիմնում, Հայաստանի զանազան կողմերից աշակերտներ է ժողովում և նրանց

հոգևորականութեան և ուսուցչութեան է պատրաստում:

«Նախնի դարու (Ե-րդ դարու) ազնիւ բողբոջները բուսուցանելու համար դաստիարակութեան մշակութիւնը, ասում է հայրենասէր վարդապետը, պէտք է այն հոգերու վրայ միայն, ուր որ Սահակ, Մեսրոպ և նոցա որդեգիր աշակերտներ բուսան. այն վանքերուն ծոցը, ուր որ իբրև ի մայրենի գիրկ՝ անխարդախ գիտութեան կաթ ծծեցին սուրբ, հոգեսնունդ դայեակներէն, կատարեալ իմաստութեան և աստուածապաշտութեան մէջ զարգացան և մինչև երկինք բարձրացաւ նոցա առաքինութեան հսկայացած հասակ... Օտար սահմանները բուսած որոմնախառն ցորենէն շինուած հացը՝ հայու ախորժակին դառն է և հայրենեաց համար ապրելու սնունդ չի տար. հայ պատանին Հայաստանի հոգերու վրայ բուսած պատուական, անխառն զարնացան ցորենի հաց կուզէ, որպէս զի քաջառույզ մարմնով և արիական հոգեով աճի և հայրենեաց սիրուն նուիրէ իւր անձն...»: Դպրոցի հիմնադիրը այդպէս է որոշում իւր ուղղութիւնը: Այդ ուղղութիւնը արտագրեց Գեր. Սրուանձտեանի պէս մարդիկ, որոնք մեզ էլ անդեցին հայրենիքի «Մանանայով, Համով - հոտով»...

* *

Հայրիկը տպարան էլ է հիմնում և հրատա-

րակում է «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որ Արծրունեաց Վարագից հայրենասէր թւերով թռու-
չելով գէպի հայաբնակ զանազան վայրեր, իւր խմբագիր-հրատարակչի մտքերն էր ամեն տեղ տարածում: Բայց որտեղից են այն միջոցները, որոնցով Վանահայրը կարողանար գպրոց և տպարան պահել, թերթ հրատարակել: Վանքն այդքան միջոցներ չունի: Եւ նա ցուպը ձեռն է առնում, գնում է Պօլիս, Կովկաս: Քարոզում է և իւր քարոզներով թմրած մարմիններին ոգևորութիւն է ներշնչում:

Թիֆլիս, Գանձակ, Շուշի... Ժողովուրդը լըցւում է եկեղեցին և լսում է վառվռուն վարդապետի հայրենասիրական քարոզները: Այդ քարոզներն իրենց աղբիւր ունենալով Ս. Գիրքը և Ագգային Պատմութիւնը՝ վերին աստիճանի համակրելի բովանդակութիւն ունէին: Հայրիկ ներկայացնում է հայրենի երկրի՝ նուիրական սարերի, ձորերի, գետերի, ամրոցների, վանքերի պատկերները, վերականգնում է հին հին դարերի յիշատակները, պատմութեան խորքից հանում է Հայկազն և Արշակունի դիւցազուններ՝ Հայկ, Արամ, Տրդատ, Վարդան... ծանօթ լինելով ազգային կեանքի անցեալին ու ներկային, նրա ուրախութեան և տխրութեան աղբիւրներին՝ ցոյց է տալիս այն միջոցները որոնցով կարելի կլինէր վերածնութեան գործն ապահովել: Նա մտնում է ամեն տեղ՝ մի ձեռքում, ինչպէս «Կուռնկի» աշխատակից Գարեգինն է գրում,

ազգային կեանքի պատմութիւնը, միւսումն՝ սուրբ Գիրքը: «Մի ձեռին ունի անցած գնացած կեանքի մնացորդներ և փոշիներ, միւսումն յօս և կենդանութիւն: Մի կողմում տեսնում է չորեքդարեան ննջած Ղազարոսի գերեզմանն, իսկ միւսում՝ նրա ազգական յարութեան և անմահութեան պարգևատու Յիսուսի յաղթական խաչը: Մի ձեռքին ունի Աւետարանի դրօշակն, իսկ միւսում ազգայնութեանն»: Դրա հետ միասին երիտասարդ վարդապետը նուէրներ է ստանում, որ հայրենիքի կենտրոնում իւր ամփոփած կենտրոնական հուրն անշէջ պահի:

Անցնում են տարիներ: Խրիմեանին տեսնում ենք Տարօնում՝ Մամիկոնեանների սրբազան երկրում: Նա Տարօնի առաջնորդն է: Այստեղ էլ նրա ձեռքին ս. Գիրքն է և ազգային պատմութիւնը: Այստեղ էլ նրա նպատակը հայրենիքի լուսաւորութիւնն է: Տառապանքները, դժուարութիւնները, նեղսակրութիւնը չեն ընկճել նրա վեհ հոգին: Ընդհակառակը գործի մէջ նա աւելի խրախուսուել, աւելի արիացել է: Իբրեւ Արծիւ հայրենասէր թւօք Վարագից գէպի Տարօն է խոյանում, ճեղքում է Մշոյ աշխարհի մշուշը, վանում է սև ամպերը: Լուսաւորութեան արևն այժմ ս. Կարապետից ևս ծագում է և շրջակայքը կենդարար ճառագայթներով ծածկում: Ատելութիւնը, նախանձը, խաւար ձգտումներն այստեղ ևս դիպչում են երիտասարդ վարդապետի երկաթի պէս ամուր կամքին, վառ հաւատին, վեհ հոգուն և փշրւում, անհետ կոր-

չում: Դպրոց, տպարան, հրատարակչական գործ հաստատուում են և Տարօնում: Ժողովրդի սէրը դէպի իւր Առաջնորդը գնալով՝ զօրանում է: Երբ վարդապետը մի նեղութեան է հանդիպում, ժողովուրդըն ինքնին օգնութեան է հասնում: Եւ թնչպէս չհասնէր, երբ նա տեսնում էր, որ վարդապետն իւր ամբողջ կեանքը ժողովրդի բարօրութեան համար զոհ է բերել:

Վասպուրականի Արծիւը կապւում է Տարօնի հետ, բայց և չի մոռանում իւր բունը՝ Վարագբ, թուչում է այնտեղ, տեսնում իւր աշակերտների գործը, մխիթարւում, պակասը լրացնում, նոր ոյժ և աշխոյժ ներշնչում: Նա դառնում է հայաստանցու մտերիմ ընկերը, սրտակից բարեկամը, խորհրդականը, հոգեւոր և մարմնաւոր բժիշկը: Բայց վրայ է հասնում մի դէպք, որ ստիպում է Նրան թողնել իւր սիրած սարերն և ձորերը, իւր սկսած գործը, իւր սիրելի ժողովուրդը և Բիւզանդիոն գնալ:

* * *

1869 թուին էր: Հայրիկը պատրիարք է ընտրւում: Նա գիտէ, որ պատրիարքական գահը փշելով է ծածկուած. նրան ծանօթ են այն բոլոր դժուարութիւնները, որոնց պիտի հանդիպէր իւր նոր գործունէութեան ասպարիզում: Բայց չի վախենում, չի յուսահատւում. գնում է այնտեղ, որտեղ կանչում է հայրենիքը: Նա համոզուած է, որ

գործունէութեան աւելի ընդարձակ ասպարիզում, աւելի մեծ իրաւունքներ ունենալով՝ աւելի հեշտութեամբ կիրաւորէ իւր մտքերն ու ծրագիրները: Պօլսում ցնծութեան աղաղակներով «կեցցէ»-ներով ժողովուրդն ընդունում է իւր սիրած Հայրիկին: Հայրիկը ժպտում է. «Թէեւ այսօր ժողովուրդը ովսաննա կոչելով ինձ այստեղ կառաջնորդէ, այլ վաղը, երբ պաշտօնիս պահանջման համեմատ սկսեմ գեղծումները բարեկարգել, պիտի սկսեն պռաւ. «ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա»: Եւ ճշմարիտ՝ որ այդպէս էլ եղաւ. չորրորդ տարին «ի խաչ հան զդա» պրոռացին: Ո՛ւմ. Նրան, որ անխաղախ սիրով ժողովրդական շահերին էր նուիրուած, որ ատում էր կեղծիքը, արտաքին կոկուած ձևերը, ուռուցիկ խօսքերը և գործ, իրական, շօշափելի գործ էր պահանջում: Նրան, որ ազգային սնդուկը պարտքից ազատեց, պատրիարքարանի մէջ կարգ կանոն մտցրեց. Նրան, որ առաջին անգամ Պօլսոյ ազգայինների ուշադրութիւնը հրաւիրեց գաւառի հայերի թշուառութեան և հարստահարութեան վրայ և տեղեկագիր ներկայացնելով Բարձրագոյն Դռանը՝ բարեկարգութիւններ պահանջեց:

Պատրիարքութեան ժամանակ Նա իւր գլխաւոր ուշը դարձրեց այն բանին, որ հեռացնի ոչնչացնի, այն խոչնդոտները, որոնք անկարելի էին դարձնում ազատ և նպատակայարմար գործունէութիւնը: Անդադար հրաւիրում էր ամենքի ուշադրութիւնը Հայաստան ժողովրդի կեանքը մաշող

ախտերի վրայ՝ կրօնափոխութեան, տգիտութեան, գաղթականութեան և հարստահարութեան: Դեղ ու դարման էր խնդրում այդ ախտերի դէմ: Բայց Նրա կոչումներին՝ «ի խաչ հան զդա» պատասխան եղաւ: Խաղաղ սրտով հեռացաւ պատրիարքարանից և անձնուիրութեան ու համեստութեան բարձր օրինակ հանդիսանալով (ինչպէս նկատել է Ս. Սպանդարեանը 1884 թ. «Նոր-Պար»-ում,) Ներսէս Պատրիարքի օրով գաւառ գնաց առաջնորդական պաշտօնով:

* *

1878 թուին Խրիմեանն անցնում է Եւրոպա՝ որպէս ներկայացուցիչ հայ ժողովրդի: Մտնում է Եւրոպայի մայրաքաղաքները, շփուում է ժամանակակից դիպլոմատիայի հետ և հիասթափւում: Աւետարանի մարդասէր սկզբունքները Եւրոպայում ևս՝ մանաւանդ Վեհարաններում, տակաւին զողանջող ձայներ են: Չկայ մարդասիրական այն հոգին, որ պատուիրում է սիրել ընկերին և առհասարակ մարդուն, կարեկից լինել նրա ցաւերին, ամոքել նրա վիշտը, սպեղանի դնել նրա վէրքերին և թեթեւցնել նրան ճնշող, սպանող ծանրութեան լուծը: Ամեն ինչ հաշուի տակ է դնւում, ամեն բան անձնական շահի տեսակէտով է լուսաբանւում: Իսկ եթէ մարդասիրութիւնն էլ երբեմն խօսքի առարկայ է լինում, այդ էլ ոչ իբրեւ յաւիտենական գա-

ղափար, այլ իբրեւ բառ, իբրեւ ձայն, որ գործադրւում է նոյն եսական, նոյն նեղ, էգօիստական միտումներին բաւականութիւն տալու համար: Աւետարանի աշակերտը, քրիստոնէական ոգով լցուած հայ եկեղեցականը բոլորովին ուրիշ բան էր կարծում Եւրոպայում տեսնել: Բայց տեսաւ մի հրաշալի գեղեցկութիւն, որին սակայն պակասում էր էականը՝ սիրտը: «Տեխնիքական գիտութիւններով ուռճացած Եւրոպան որքան յետ է տակուին քրիստոնէական-բարոյականից, առանց որի չկայ ճշմարիտ լուսաւորութիւն: Եւ կրգայ արդեօք մի ժամանակ, երբ «ես»-ը իւր դիմացը «գու» ևս կտեսնի, երբ անձնական ձգտումներին կփոխարինեն հասարակական, հանրամարդկային շահերը, երբ կարօտեալի օգտին իրենց ունեցածը, իրենց ոյժը մէջ կրերեն՝ առանց փոխարինութիւն սպասելու:

Մի ներքին ձայն պատասխանում է. «այո՛, կգայ»:

* *

Այդպէս է Հայրիկը. նա անսլաքման հաւատում է բարու յաղթանակին, նա համոզուած է, որ վատը, չարը, խաւարը, որքան էլ խորամանկ, որքան էլ հաստահիմն լինին, բայց յաւիտենական գոյութիւն չեն ունենալ. պարտութիւն կկրեն և կմեռնեն: Նա գիտէ, որ լոյսը, բարին, գեղեցիկը դժուարութեամբ են առաջանում, նեղ է նրանց դուռը,

փշոտ է ճանապարհը. բայց խորը համոզուած է, որ յաղթանակը վերջ ի վերջոյ գրանցւոյ՝ կողմը կր-
լինի, որ գրանց գոյութիւնը յաւիտեանս ապա-
հովուած է: Այդ հաւատը ներշնչել են նրան ս.
Գիրքը և Ազգային պատմութիւնը: Այդ հաւա-
տը ներշնչել են նրան Արարատեան երկիրը և
Պաղեստինը: Մի տեղ չարութեան խորհուրդնե-
րի մարմնացումը՝ Բէլն իւր խօյ հսկաներով ընկ-
նում է Հայկի երեքթեանի հարուածից. և
Գրգուռ սարի գագաթին բարութեան յաղթանակն
է կանգնում՝ «ի տեսիլ ապագայ սերնդոց»: Նոյն
բարութեան յաղթանակը աւելի փառաւոր և ահա-
ւոր կերպով բարձրանում է և միւս տեղը՝ Պաղես-
տին, Գողգոթայի գագաթին, յաղթանակ, որի պա-
տուանդանի տակ ճախճախուել և ճախճախուում է
չարի գլուխը:

Այդ խորը հաւատը չթողեց Հայրիկին և այն
ժամանակ, երբ իբր ականայ ուխտաւոր Երուսաղէմ
ուղարկուեցաւ: Ի՞նչպէս կվհատէր, ի՞նչպէս կթու-
լացնէր իւր հաւատը զէպի բարու կատարեալ յաղ-
թանակն այն մարդը, որ մօտ երեք քառորդ դար
կեանքի մրրկածով ալիքների կատաղի կռուի մէջ
փորձուել էր, սարերի ու ձորերի հետ ոտի տակ էր
տուել ամեն խոչնդոտներ, ամեն փուշ ու դատասկ,
և միշտ չարութիւնը խորտակուած էր տեսել:

Եւ այդ չարութիւնը մի անգամ էլ խորտա-
կուեց. և նշանաւոր էր այդ խորտակումը: Աստուա-
ծային անհասանելի կամքով համազգային ժողովը

ականայ ուխտաւորին Հայրապետական Գահի ար-
ժանաւոր ժառանգ ընտրեց: Վասպուրականի Ար-
ծիւը հրաւեր ստացաւ թողնել Աւետեաց երկիրը,
թողնել հին Սիօնը և հայրենասէր թեկերով թռչե-
լով՝ գալ Արարատեան աշխարհը, նոր Սիօնը,

«Ի Տաճարն աստուածակերտ, ի մայրն մեր ա-
մենածին:

«Ի վեհ և գերպանծ աթոռ Հայոց Լուսաւորչին:

* * *

Ուղղութիւնը, որին հետեւել է Հայրիկը, մըտ-
քերը, որ Նա շարունակ սերմել է իւր հայրենիքի
մտաւոր անդամստանում, պայծառ գոյներով երևում
են և այն գրաւոր վաստակների մէջ, որոնցով Հայ-
րիկը հանդէս է գալիս իբրեւ գրական գործիչ: Նրա
առաջին աշտատութիւններն են հրաւիրակները՝
«Հրաւիրակ երկրին Աւետեաց» և «Հրաւիրակ երկրին
Արարատեան»:

Առաջին գիրքը արդիւնք է այն ճանապար-
հորդութեան, որ Հեղինակը երիտասարդ հասակում
կատարեց Պաղեստինում: Սրբազան տեղերը, ուր ապ-
րել է Մեծ Վարդապետը, ուր շրջել է Նա, ուր
խօսել է սիրոյ աստուածային վարդապետութիւնը,
ուր իւր երկնային շնորհների համար ծաղրի,
անարգանքի, լուգայական համբույրի, չարչարանքի
էր ենթարկուել, չէին կարող չազդել երիտասարդ
ուխտաւորի զգայուն սրտի վրայ: Գողգոթան՝ իւր

անցեալ յիշատակներով, իւր սրբազան աւանդութիւններով շարժեց ուխտաւորի քնարի լարերը, և նա հիւսեց իւր «Հրաւիրակ երկրին Աւետեաց» քերթուածը: Այստեղ հեղինակը ցոյց է տալիս այն տեղերը, որոնց հետ կապուած է Մեծ Վարդապետի կեանքը. երգում է քրիստոնէական գաղափարի ծրնունքը, տարածուելը, Աստուածորդու նահատակութիւնը՝ Նրա քարոզած լուսաւոր մտքերի և մարդասիրական գաղափարների պատճառով: Աւետարանի հոգին ցոլանում է գրուածքի իւրաքանչիւր տողից: Հեղինակի քրիստոնէական ջերմեռանդ հոգին և բանաստեղծական աւիւնն իրար խառնուելով՝ յափշտակում են ընթերցողին և Աստուածորդու բնական տեղերը փոխադրում:

Ընթերցողի ուշքն ու միտքը բոլորովին այլ տեղ է սլանում, երբ նա կարդում է Արարատեան երկրի հրաւիրակը: Կրօնական զգացմունքը տեղի է տալիս հայրենասիրական զգացմունքին: Հեղինակի քնարը հայրենիքի ձայներ է արձակում, ներկայացնում է հայրենի երկրի անցեալն ու ներկան, փայլուն և տխուր բույէները: Գերեզմաններից դուրս է կանչում ազգային պատմութեան հերոսների ուրուականները՝ Տրդատ, Գրիգոր, Սահակ, Մեսրոպ, Վարդան... և խօսեցնում: Ընթերցողի ձեռքից բռնած տանում է հայրենիքի նշանաւոր տեղերը — Արարատ, Էջմիածին, Անի... և Նոր Սիօնի ի ըսփիւռս տարածուած որդիներին կապում է այդ տեղերի հետ: Կարգալ այդ տողերը և Համակուել այն

սրբազան զգացմունքով, որով վառուած է հեղինակը, անկարելի է:

Երկու քերթուածների համար հեղինակին իբրեւ աղբիւր ծառայում են դարձեալ ս. Գիրքը և Ազգային պատմութիւնը:

Գրանք են Խրիմեանի ոգևորութեան աղբիւրները. և դրա համար ընթերցողը մի տեղ համակուում է քրիստոնէական, միւս տեղը հայրենասիրական զգացմունքով:

Գրանցից զատ Խրիմեան Հայրիկը ունի և ուրիշ երկեր՝ գրուած աշխարհիկ լեզուով: «Խաչի ճառ», «Մարգարիտ արքայութեան երկնից» գրքոյկների մէջ հեղինակը բացատրում է քրիստոնէութեան գաղափարները: Այդ գրքերից առաջինը նուէր է հայ հոգևորականութեանը, խորհրդաւոր նուէր: «Վանգոյժ» և «Հայգոյժ» գրքոյկները արդիւնք են հեղինակի հայրենասիրական բուռն զգացմունքների: Մարդիկը ծքում սրտի տեղ քար լպէտք է լինի, որ կարգայ այդ նոր Երեմիայի ողբերը, և չարտասուի, չըլալ, իւր արցունքներն էլ հեղինակի արցունքների հետ չխառնի և այրուող երկրի կրակների վրայ չսրսկի: Կարգում էք և ձեր առաջը կանգնած էք տեսնում մի քնքոյշ բանաստեղծական բնաւորութիւն՝ հայրենեաց սիրոյ սրբազան յափշտակութեան մէջ:

* * *

«Գրախտի Ընտանիք» և «Սիրաք ու Սամուէլ» գրքերն աւելի փիլիսոփայական հեղինակութիւններ

21380

են: Այստեղ մենք ծանօթանում ենք հեղինակի աշխարհայեացքի հետ կեանքի զանազան խնդիրների մասին: «Իրախտի ընտանիք»-ի մէջ հեղինակը ցոյց է տալիս այն մեծ նշանակութիւնը, որ ընտանիքն ունի հասարակութեան և ազգի համար: Մի ազգի բախտաւորութեան և տխրութեան աղբիւրն ընտանիքն է: Ընտանիքն այն հիմնաքարն է, որի վրայ բարձրանում են հասարակութիւն, ժողովուրդ և ազգ: Եթէ փչացած է ընտանիքը, բարոյապէս հիւանդ է, եթէ քայքայքուած է նրա ամբողջութիւնը, ապա ուրեմն փչացած են և հասարակութիւնն ու ամբողջ ժողովուրդը, քայքայուած են նրանց միաւորող կապերը: Ներկայացնելով այն գաղափարական ընտանիքը, որ կազմուած է ամուսինների ազատ ընտրութեամբ, ուր տիրում է սէր, իրաւունքների հաւասարութիւն, գործունէութեան որոշուած սահմաններ, պարտաճանաչութիւն, եռանդուն աշխատասիրութիւն, նա խորշում է այն հումեփ, խակ մտքերից, որոնք լուսաւորութեան, ազատամտութեան անունով ներս մտնելով՝ ճգնում են հայկական օճախի սրբութիւնը պղծել և նրա ամբողջութիւնը քայքայել: Նա ոգևորում է նահապետական ընտանիքի պարզութեամբ և մաքրութեամբ և յորդորում է օրինակ ունենալ այդ պարզ և մաքուր ընտանիքը: Մի թողութեամբ չափաւոր նահապետական տուն և ընտանիք»-այդ պատուէրն է տալիս ժամանակակիցներին: Տեսնելով այն խանդարուած ներդաշնակութիւնը, որ արդիւնք է մեր

ժամանակի մոլորութիւնների, նկատում է. «Արդի լուսաւոր և քաղաքակիրթ աշխարհի որդիքները պէտք է պատկառին նահապետաց պատկառելի շուքէն,—որքան իրաւացի նկատողութիւն: Կտակում է, որ «հայրենատուր սուրբ կրօն, հաւատք, սուրբ հարց աւանդութիւնք անաղարտ ու անեղծ պահեն, Հայաստանեայց եկեղեցին սիրեն, Թագէտսի և Լուսաւորիչ Հօր հօտէն ու փարախէն չի բաժնուին»:

«Սիրաք և Սամուէլ»-ը բարի հօր՝ հեղինակի կրթական դասերն են, որոնք աւանդւում են որդուն՝ հայ ժողովրդին:

Այստեղ յարուցուած են մի շարք սօցիալական խնդիրներ, որոնց մասին խորհրդածում է նոյն Աւետարանի աշակերտը, նոյն հայրենասէր հոգին: Նա խօսում ու չափում է «ուշ խիստ բամբասանաց կամ կրից չափով, հապա ամենայն հանդարտութեամբ, որչափ Քրիստոսի հեզութեան օրինակը կուսուցանէ»:

«Ճշմարտութեան մկրատը, ասել էր նա 1891 թուին, զգուշութեամբ պէտք է շարժել, որպէս զի առկայծեալ ճրագին պատրոյգին ծայր կտրելու ժամանակն իսպառ չչիջուցանէ»: Նուիրուած լինելով ժողովրդի առաջագիմութեան, լուսաւորութեան գործին՝ Խրիմեանը երբէք իւր գրիչը չէ ծառայեցրել այնպիսի խակ մտքերի, որոնք որքան էլ ազատամտութեան արդիւնք համարուէին, լուսաւորելու տեղ՝ պէտք ժողովրդին մոլորեցնէին և աւելի տգիտացնէին: Նա չէ սիրում փթածը, վնա-

սակարը, որ կան թէ հին և թէ նոր աշխարհներ
ըն մէջ. Նա արհամարհում է խաւար մտքերը,
նախապաշարմունքները, ընդունում է միայն օգ-
տակարը՝ լինի հին թէ նոր, այդ միւլենոյն է, միայն
ազգային ինքնուրոյն գարգացմանը նպաստաւոր
լինի: Իւր գրականական գործունէութեան ամբողջ
շրջանում նա միայն այնպիսի մտքեր է սերմանել,
որոնք ըստ ամենայնի հարազատ և յարմար են
մեր երկրին, հողին, ջրին, օդին, որոնք կարող են
աճել, զարգանալ և բարի պտուղներ տալ:

* *

Այդ Մեծ Մարդն այսօր մեր Վեհափառ Հայ-
րապետն է, Լուսաւորիչ Հօր Աթոռի Աստուածըն-
տիր յաջորդը և գահակալը: Որքան ուրախութիւն:

«Նախախնամութեան Սուրբ Աջը Հայաստա-
նեայց առաքելական Աթոռի համար ընտրել և ա-
ռաքել է մի այնպիսի գահակալ, որ ամփոփում է
իւր մէջ ողջամիտ հայութեան գերագոյն իղձերի և
ձգտումների լրումը՝ մի գահակալ, որ ճանաչել ու
սիրել է իւր ազգն ու եկեղեցին դեռ մանուկ հա-
սակից և որոնց նուիրել է Նա վաթսուն երկար
տարիներ կատարեալ աճնուիրութեամբ, որ ապրել
է հայ ժողովրդի մէջ, հայութեան սրտում իբրև
անձնագոհ հովիւ, իբրև խնամածու հայր, որ ու-
րախացել և արտասուել է այդ ժողովրդի հետ միա-
սին և որին սովորեցրել է Նա՝ սիրել հայրենիքը
և եկեղեցին ուրախութեան և տխրութեան օրե-
բերում (Նոր-Ռար 1893 թ.)



4613

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0031674

